Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26012

ԹԵԶԻՍՆԵՐ

ՀԱՅԿՈՈՊԻ ԼԻԱԶՈՐԱԿԱՆ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԹԻՎ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1003
Ա 318

1. ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՅԱՆՑԻ ՆՈՐՄԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

2. ՁՐԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

334.5
Հ-24

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1926 Թ.

05.06.2013

05 JAN 2010

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.

Սպառողական ցանցի անդադար և արագ աճումն ու լայնացումը, յերկրի տնտեսության մեջ սպառկոոպերացիայի դերի ուժեղանալը և նրա շրջանառությունների անընդհատ աճումը իրենցով պայմանավորում են նաև կազմակերպչական աշխատանքների և այդ աշխատանքները կատարող ապպարատի համապատասխան աճումը։ Մեր ունեցած մի շարք նվաճումների հետ՝ մենք ունենք բազմաթիվ թերություններ, որոնց վերացումը Հայկոոպի լիազորների նախկին ժողովից հետո յեղել է մեր աշխատանքների և ուշադրության կենտրոնը։

Սակայն բնորոշ է այն, որ լիազորների 2-րդ ժողովի կողմից հաստատված կազմակերպչական գործունեության ծրագրերի իրականացումը Հայկոոպի Կազմ-Բաժնի ուժերից վեր յեղավ։ Թեպետև այդ ծրագիրը ինքն ըստ ինքյան շատ հաստատ եր և ընդգրկել է միայն անհրաժեշտ աշխատանքների ամենափոքր մասը, բայց և այնպես այդ ծրագիրը ամբողջովին չի իրագործվել Կազմ-Բաժնի կողմից՝ որովհետև վերջինիս ապպարատի աճումը յետ է մնացել կյանքի առաջադրած խնդիրների աճման թափից և կազմակերպչական ապպարատը լրացրվել է ավելի դանդաղ քան յենթադրվում եր։ Յեվ յեթե ծրագիրը նրա վորոշ մասով չի իրականացվել՝ այդ նաև

այն պատճառով, որ Համագումարի կողմից հաստատված ծրագիրը հաշվի չէ առել աշխատող ապպարատի ավելի ուժեղ կազմ և, համենայն դեպս՝ չէր նախատեսել ցանցի աճման այդպիսի բուռն թափ։

2.

Ահա թե ինչու՝ անցյալ տարվա այդ փորձի հիման վրա, մեր կազմակերպչական գործունեության ծրագիրը մենք պետք է հիմնենք մեր կարելիությունների ու իրական հնարավորությունների վրա՝ հաշվի առնելով մեր աշխատող ապպարատը, նրա քանակական ու որակական կազմով։

Բայց արձանագրելով այդ երկու դրությունները՝ լիազորների ժողովը պիտի մատնանշի, որ կազմակերպչական անելիքների աճումը պահանջում է մեծ ուշադրություն դարձնել նրանց վրա և ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ կոոպերացիայի կազմակերպչական ապպարատը ուժեղացնելու և նրա աշխատանքի որակը բարձրացնելու համար։

3.

Առաջին հերթին Համագումարը պետք է մատնանշի ծրագրային աշխատանքի խորացման անհրաժշտության վրա՝ թե Հայկոոպի և թե սկզբնական ցանցի մեջ։

Հայկոոպն արդեն վճռականապես անցել է ծրագրային աշխատանքների, բայց վերջինս ամբողջովին կիրագործվի այն ժամանակ, երբ սպառկոոպերացիայի ամբողջ սիստեման կաշխատի միատեսակ, որինակելի մի ծրագրով և երբ Հայկոոպը հաշվի կառնի ու կը միացնի ամբողջ ցանցի ծրագրները իրենի հետ։ Այդ կլինի ամենից հաստատուն գրավականը՝ թե ցանցի առողջացման և թե Հայկոոպի ու ամբողջ սիստեմայի ամրացման։

Ահա թե ինչու՝ Հայկոոպը իր առաջիկա գործունեությունն մեջ հատուկ ուշք պիտի դարձնի Պլանային Բյուրոյի ու Կազմակերպչական Բաժնի աշխատանքներն ուժեղացնելու վրա, իսկ Կազմակերպչական բաժինը իր հերթին պիտի ուժեղացնի յուր աշխատանքային կապը Հայկոոպի Առևտրական Բաժնի հետ՝ ձեռք առնելով մի շարք միջոցներ—պետարդյունաբերության ապրանքների վորակն ուսումնասիրելու և այդ վորակի լավացման համար տարվող աշխատանքների նյութեր հավաքելու նպատակով։

Համագումարը պիտի առաջարկի Կազմակերպչական Բաժնին իր աշխատանքների ծրագրի մեջ մտցնել հետևյալ կոնկրետ խնդիրները՝

ա) մշակել մեր ցանցի պահանջներին համապատասխանող որինակելի տնտեսա-ֆինանսական ծրագիր,

բ) մշակել գյուղական սպառողական ընկերությունների կազմակերպչական և կուլտուր-կրթական աշխատանքների ծրագիր (թե բազմախանութների և թե միախանութների համար)։

Այդ աշխատանքը պիտի վերջացնել նոր տնտեսական տարվա սկզբին և նախորդ պետք է ուղարկել տեղերին։

4.

Հայկոոպի Խորհրդի և Լիազորների ժողովի նախկին վորոշումները իրագործելու և ցանցի հետագա շինարարական աշխատանքների մեջ պարզություն մտցնելու նպատակով՝ ինչպես նաև ցանցի տարերային և չծրագրված աճման ու «վայրենի» կոոպերատիվների առաջացման դեմ պայքարելու համար՝ Հայկոոպը վերջնականապես պետք է անցնի գոյություն ունեցող ցանցի նորմալիզացիայի ու ռացիոնալիզացիայի գործին և բացվելիք սպառողական ընկերությունների համար պետք է կազմի քարտեզի նախագիծ։

Այդ աշխատանքները հիմք պետք է ունենան այն սկզբ-

բունքները, վորոնք մշակված են Համամիութենական առաջին Կազմակերպչական Խորհրդակցության կողմից և մտնում են այս բանաձևին կցված թեզիսների մեջ «սպառողական կոոպերատիվ ցանցի նորմալիզացիայի մասին»։

Բոլոր «վայրենի» կոոպերատիվները պետք է շտապ կարգով ուսումնասիրվեն և նրանցից ավելի առողջները մրցցրվեն մեր սիստեմայի մեջ, իսկ կեղծ կոոպերատիվները պետք է անհապաղ կազմալուծվեն։

Առանձնապես ուժեղ պայքար պետք է տանել շրջանային տիպի բազմախանութներում նկատվող բաժանմունքների ցանցի անսխատեմ ու չըծրագրված աճման դեմ, քանի վոր վերջին յերևույթը անբարենպաստ կերպով է անդրադառնում յայնացող կոոպերատիվների ֆինանսական դրության վրա, խառնում է կոոպերատիվ սիստեմայի վարկավորման ծրագիրները, դանդաղեցնում է ապրանքաշրջանառությունը։ Այդ ձեռնարկները ու բաժանմունքները մասամբ կառուցվում են անտեսապես չուսումնասիրված և խախուտ հիմքերի վրա՝ խանգարելով Հայկոոպի ամբողջ աշխատանքին, վորը ուղղված է նորմալ ցանց կառուցանելու գործին։

Համագումարը պիտի հաստատի, վորպես պարտադիր կանոն, վոր վոչ մի խանութ, վոչ մի նոր ձեռնակ չի կարող բացվել ու գործել՝ առանց տվյալ կոոպերատիվի ընդհանուր կամ Լիազորական Ժողովի վորոշման ու Հայկոոպի հաստատման (յեթե խանութը կամ ձեռնարկը բացվում է տվյալ կոոպերատիվի կենտրոնից դուրս)։

5.

Բացի Հայկոոպի այդ հիմնական խնդրից՝ ծրագրային աշխատանքի անցնելու նկատմամբ, շատ անհրաժեշտ է ուժեղացնել հրահանգչական ոգնությունը սկզբնական կոոպերատիվ ցանցին։ Պարտադիր վերաբնության դեկրետը առաջիկայում պիտի կիրառվի ամբողջությամբ։ Բացի պարտադիր վերաբնություններից՝ Հայկոոպի հրահանգիչները կամ այլ ներկայացուցիչները անպայման պետք է այցելեն ամեն մի կոոպերատիվ տարեկան առնվազն յերկու անգամ։ Բացառիկ դեպքերում՝ յերբ այս իրականացնել անհնարին է, սպառողական կոոպերատիվների ներկայացուցիչները պիտի հրավիրվեն կենտրոնում՝ համապատասխան զեկուցումներ տալու համար։

Կազմ-Բաժնի աշխատանքների ծրագրի այն մասը, վոր վերաբերվում է Հայկոոպի Վարչությանը, կամ Կազմ-Կոլեգիայի մեջ սպառողական կոոպերատիվների զեկուցումները դնելուն և կամ Հայկոոպի Վարչության անդամների ու պատասխանատու աշխատակիցների տեղերն այցելելուն, պետք է ճիշտ կերպով իրագործվի։

Համագումարը այս աշխատանքների անշեղ կիրառման հսկողությունը պիտի հանձնարարի Հայկոոպի Խորհրդին, իսկ Կազմակերպչական Բաժինը պետք է պարբերաբար հաշիվ տա Խորհրդին ցանցի մեջ տարած աշխատանքների մասին։

6.

Բացի այդ՝ Հայկոոպի կազմակերպչական բաժինը պետք է մշակի սկզբնական ցանցին մշտական ինֆորմացիա տալու կարգը թե ընդհանուր տնտեսական կոնյուկտուրայի մասին թե կոոպերացիայի,—մասնավորապես սպառողականի, դրության ու զարգացման մասին։ Սկզբնական ցանցը պիտի տեղյակ լինի Հայկոոպի ընդհանուր և հատկապես առևտրական գործունեության, տեղերը շարունակ պիտի ստանան Հայկոոպից կոնյուկտուրային զեկուցումներ, բյուլետեններ, ցուցակներ, գների պրեյս-կուրանտներ և հաշվետու զեկուցումներ։

Հայկոոպի Վարչության և Կոոպերատիվ Խորհրդի կա-

բևոր վորոշումները, այլև Հայկոոպի Խորհրդի բոլոր վորոշումները պետք է հաղորդվեն սկզբնական կոոպերատիվ ցանցին։

7.

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել վատնումների և յուրացումների դեմ տարվող պայքարի վրա։ Մի՛կոոպերատիվ կենտրոնական Խորհրդի այս մասին առաջարկած միջոցները պետք է լիովին ոգտագործվեն այդ պայքարի ընթացքում։ Բայց կոոպերատիվ այդ թերություններին և հաշվապահական խառնաշփոթություններին վերջ տալու համար՝ մի շարք հերթական դասընթացքների միջոցով նոր հաշվապահներ և առևտրականներ պատրաստելու կարելիության բացակայությունը պետք է ստիպի Հայկոոպին մտածել ցանցի աշխատավորների վերապատրաստման մասին, այլև մի շարք ուրիշ միջոցների մասին, բարձրացնելով կոոպերատիվ աշխատողների վորակը և սովորեցնելով ներկայումս անուժ վերաքննիչ հանձնաժողովներին՝ վերաքննական գործին։ Խանութային և վերաստուգիչ հանձնաժողովների պասիվության մեջ այժմ վորոշ չափով բեկումն է նկատվում, բայց դեռևս չունենք նրանց ակտիվությունը, վորովհետև նրանք միանգամայն անծանոթ են գործին։

Այս բոլորից բխում է, վոր հաշվապահական ապպարատի հետագա կանոնավորումը, հաշվետարների վերապատրաստումը, վերաքննիչ հանձնաժողովներին քննական գործին ծանոթացնելն ու խանութային հանձնաժողովներից կոնտրոլային մարմիններ ու ինքնագործունյա փայատերեր պատրաստելը պետք է Հայկոոպի և իր հետագա աշխատանքների հոգատարության կենտրոնը լինեն։

8.

Հենց այժմ, ինչպես վոչ մի ժամանակ, զգացվում է

փայատիրոջ ակտիվ ու ինքնագործ մասնակցության անհրաժեշտությունը ցանցի կոոպերատիվ շինարարության մեջ։

Անպայման ուրախալի չէ այն հանգամանքը, վոր այժմ նրա մեջ կոոպերացված են 50 հազարից ավելի քաղաքացիներ և վոր այդ կոոպերացումը անընդհատ ու հաջող կերպով շարունակվում է, սակայն այդ կոոպերացված մասսան շատ քիչ է տարբերվում չկոոպերացվածից—յեթե չը հաշվենք այն, վոր նա մտցրել է վոչ լրիվ փայեր—վորովհետև այդ մասսան իր ճնշող մեծամասնությամբ վոչ միայն իր կոոպերատիվ գործի մեջ չի արտահայտում ակտիվ մասնակցություն, այլև չունի ամենատարրական. գաղափարը՝ կոոպերացիայի իսկական էության և խնդիրների մասին։

Մոտակա տարիների ընթացքում փայատերի ակտիվացումը Հայկոոպի առաջնակարգ ու կարևոր խնդիրն է հանդիսանում, վորին պետք է ձեռնարկել շուտափույթ և ուժեղ կերպով։ Դրան մենք կը հասնենք Հայկոոպի և ցանցի կոոպերատիվ-կրթական գործի ուժեղացման միջոցով և, մյուս կողմից, տանելով կազմակերպչական աշխատանք՝ ըստ սոց. ցանցի փայատիրոջ առաջ ունեցած հաշվետվության կարգապահությունն ուժեղացնելու վերաբերմամբ։

Հերթական ժողովները Հայկոոպի կողմից պետք է կարգավորվեն ըստ որացույցի, նրանց պետք է հաճախացնել ու տալ կոոպերատիվ-կրթական խորը բովանդակություն և կոոպերատիվ վարչությունների կողմից այդ հերթական ժողովները հրավիրելու վերաբերմամբ յեղած ամեն մի թեքում պետք է կարգապահորեն հետապնդվի Հայկոոպի կողմից։

9.

Փայատերերի ակտիվացման մեծ գործի մեջ վոչ մի կերպ չը պետք է մոռացվի կնոջ դերը, կնոջը կոոպերացիայի շարքերը քաշելը և նրա մեջ ակտիվ աշխատանքներ

տալը պետք է համարվի մեր կուլտուրականության ամենապարզ չափանիշը։ Նույն չափով Հայկոոպը պետք է հոգա յերիտասարդության կոոպեցիայի մեջ քաշելու և նրա շարքերից գյուղի կոոպերատիվ աշխատակիցներ պատրաստելու հարցի մասին։

10.

Այս հարցերի հետ միասին՝ մեծ չափով պետք է կատարվեն աշխատանքներ չքավոր գյուղացիների կոոպերացման նույնպես և սպառ. ընկերություններին կից միջակ և չքավոր գյուղացիներից կազմակերպելու համար, ամուր միջուկ, որը պետք է հակադրվի կուլակին, որը ձգտում է վարչական կոնտրոլային մարմինների միջոցով գյուղի կոոպերացիայում զեկավար դիրքեր գրավել։

Այդ կարևոր խնդրի վրա պետք է հրավիրել բոլոր կուսակցական, արհեստակցական և գյուղի խորհրդային հասարակական հիմնարկների և հատկապես ՓՈԿ-երի ուշադրությունը, որոնք բացի կազմակերպչական ոգնությունից ցույց են տալիս նաև նյութական խոշոր ոգնություն։

Հայկոոպի Կազմ-Բաժնի կողմից չքավոր գյուղացիների կոոպերացման մասին առաջարկված թեզիսների հիման վրա, այսուհետև ամբողջ ցանցը պետք է տարեկան իր ոգուտից 10 տոկ. հատկացնի գյուղի չքավորների կոոպերացման համար։

Հաստատելով այդ թեզիսները՝ Լիազորների Ժողովը պիտի առաջարկի ցանցին անշեղ կերպով զեկավարվել նրանցով։

11.

Ինչպես ներկա, այնպես և հետագա տարիները պետք է մասնանշվեն որպես կոոպերատիվ սիստեմայի վճռական

անցման շրջանը «քաղաքակիրթ կոոպերատորների հասարակակարգի շինարարության»։ գյուղացիական մասսաների գիտակցության մեջ կուլտուրական հեղափոխություն առաջ բերելու միջոցով՝ կոոպերացիան իր ամբողջ աշխատանքով ներկայանալով այդ կուլտուրական հեղափոխության ամենամեծ ազդակը և կոոպերատիվ տնտեսավարական ձևերի և նոր կենցաղի բաղկացուցիչ մասերի տարածողը՝ չի կարող սահմանափակվել պասսիվ քարոզչի դերով։ Նա մեծ չափով պետք է հոգա կոոպերատիվ գաղափարների քարոզման, լայն մասսաների միջից կոոպերատիվ անդրագիտությունը վերացնելու, կոոպերատորներ պատրաստելու և վերապատրաստելու, ինչպես և հրատարակչությունը մեծացնելու և գյուղին գիրք մատակարարելու խնդիրները։

Իր այդ բոլոր ձեռնարկությունների մեջ կոոպերացիան պաշտպան և ոգնություն կգտնի կուսակցությունից, քաղուսվարական մարմիններից, արհմիություններից, որոնք այդ գործի մեջ ունեն պրակտիկ և մեթոդական մեծ փորձառություն։ Միանգամայն նպատակահարմար ու անհրաժեշտ պետք է համարել կոոպերացիայի կողմից իր աշխատանքները լրիվ կերպով այդ կազմակերպությունների հետ կապակցելը։

Կոոպերատիվ կրթական գործունեության զարգացման համար անհրաժեշտ են նյութական միջոցներ, որը կոոպերացիան պետք է ձեռք բերի իր ուրիշ, վոչ արտադրական, ծախսերի կրճատումից։

Կոոպ. կրթական ծախսերը վոչ մի դեպքում չի կարելի ընդունել որպես վոչ արտադրական, յեթե այդ ծախսերն արվում են ռացիոնալ կերպով և ուղղված են բավարարելու կոոպերացիայի իսկական կարիքները։

Այդ դեպքում նրանք շատ արդյունավետ են։

Մինչև այժմ ոգուտից կատարվում էին հատկացում-

ներ 10 տոկ. չափով։ Այսուհետև պետք է զեկավարվել կոոպ. կրթ. վերաբերմամբ համամիութենական կոոպերատիվ կենտրոնների 2-րդ խորհրդակցության հանած վորոշումներով, վորոնք հաստատվել են Ցենտրոսոյուզի կողմից։ Այդ խորհրդակցության կողմից կոոպ. կրթ. գործի վերաբերմամբ հաստատված հատկացումների չափը Հայկոոպի լիազորների Համագումարը պարտադիր պիտի համարի Հ. Խ. Ս. Հ. սպառողների համար։

I

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՑԱՆՑԻ ՆՈՐՄԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

1.

Սպառողական կոոպերացիայի գոյություն ունեցող այժման ցանցը հետևանք է բանվորագյուղացիական լայն մասսաների ստիխանաբար զարգացող ինքնագործունեության և այն կազմակերպչական զեկավարության, վոր տարել է Հ. Խ. Ս. Հ. Սպառկոոպերատիվների կենտրոն-Հայկոոպը։

Սակայն թե մասսայական ինքնագործությունը ներքևից և թե կենտրոնի զեկավարությունը վերևից ըստ իրենց էության հաշվական ժամանակաշրջանում չեն կրել խիստ ծրագրված բնույթ, այլ ավելի շուտ ունեցել են կազմակերպչական նոր վորոնումների տարբերային բնույթ։

2.

Սակայն սպառողական կոոպերացիայի կազմակերպչական աշխատանքների այս տարբերային բնույթը բոլորովին չի հակասել այդ ասպարիզում տարվելիք քաղաքականության հիմնական այն մոմենտներին, վորոնք թելադրվել են թե կոոպերատիվ կենտրոնների, թե մեր պետականության բարձր մարմինների և թե Կոմունիստական Կուսակցության կողմից։

3.

Մասնավորապես Հայկոոպի Լիազորների 2-րդ Համագումարը (1924 թ. հոկտեմբերին) նշել եր կազմակերպ-

չական աշխատանքի պարզ ու վորոշ ուղիներ, վորոնք ընդհանուր առմամբ ամփոփված են համագումարի կողմից հաստատված թեզիսների 13-րդ կետում [1]։

4.

Հաշվական ժամանակաշրջանում կոոպերատիվ շինարարության ղեկավարության գործում տանելով վերոհիշյալ քաղաքականությունը, Հայկոոպը անխուսափելիորեն պիտի հարմարեցներ յուր կազմակերպչական գործունեությունը մի կողմից առևտրական ու վարկային հնարավորությունների հաճախակի փոխվող կոնյունկտուրայի հետ և մյուս կողմից գյուղացիության գնորդական ունակության հետևանքով զարգացող կոոպերացման պրոցեսի հետ։

5.

Այդ բոլորի հետևանքով Հայաստանի սպառողական Կոոպերատիվների սկզբնական ցանցն այժմ իրենից ներ-

[1]) Հիշյալ կետը ամբողջովին բերում ենք. «Սկզբնական կոոպերատիվները լինելու են բազմախանութային և միախանութային։ Տնտեսական խոշոր նշանակություն ունեցող շրջաններում, այլ և գավառական ու գավառակային կենտրոններում բազմախանութ կոոպերատիվը լավագույն հետևանքներ է տալիս։ Միաժամանակ շնորհիվ—գյուղացիական Փոխոգնություններին, Կոմբինատներին, Կոմբերիամիության—տեղերում յերևան բերած ինքնագործունեությանը և գյուղական լայն մասսաների ստիհանական մտավոր կոոպերացմանը՝ միախանութ կոոպերատիվներն առանձին շրջաններում ցույց են տալիս վոչ պակաս կենսունակություն. խանգարել այդ ինքնագործունեության ձևավորումներին արհեստական խոչընդոտներով նպատակահարմար չէ և վոչ էլ կոոպերացման շահերի տեսակետից ոգտակար, ուստի թե բազմախանութ և թե միախանութ կոոպերատիվների ազատ զարգացման համար պիտի ստեղծվեն հավասարաչափ նորմալ պայմաններ»։

կայացնում և կազմակերպչական հետևյալ ձևավորումների համեմատական կայունացումը. ա) միախանութ կոոպերատիվներ, վորոնք գտնվում են մի բնակավայրում և ունեն մի կոոպերատիվ կետ, բ) ներքին տիպի բազմախանութ կոոպերատիվներ, վորոնք գործում են մի բնակավայրի մաշտաբով և ունեն յերկու կամ ավելի կոոպերատիվ կետեր և գ) շրջանային բազմախանութ կոոպերատիվներ, վորոնք գործում են մի քանի բնակավայրերում և ունեն յերկու կամ ավելի կոոպերատիվ կետեր [1]։

6.

Միաժամանակ՝ այդ համեմատաբար կայունացած ցանցի մեջ, այլև նրանից անկախ՝ տեղի յե ունենում կազմակերպչական խմորման վորոշ պրոցես, վոր բնորոշվում է հետևյալ մոմենտներով՝

ա) բազմախանութ կոոպերատիվների մի շարք բաժանմունքներ՝ զարգացնելով տեղական ակտիվությունը, ձգտում են անկախ կոոպերատիվների վերածվել,

բ) մի շարք թույլ կոոպերատիվներ՝ համոզվելով իրենց տնտեսական և կազմակերպչական անկայունության մեջ, ձգտում են ձուլվել հարևան վորևե միախանութի կամ բազմախանութի հետ,

և գ) մի շարք գյուղերում ինքնաբերաբար կազմակերպվել են նոր կոոպերատիվներ, վորոնցից վոմանք արդեն տնտեսական գործունեության են անցել՝ առանց իրավական ձևակերպում ստանալու և առանց հաստատվելու կենտրոնում (այսպիսի կոոպերատիվները կոչվում են «վայրենի» կոոպերատիվներ)—իսկ վոմանք համախոսականների, մամուլի

[1]) Շրջանային բառը պիտի հասկանալ վոչ վարչական, այլ տնտեսական մտքով։

և պատգամավորների միջոցով ուզում են իրավականորեն ձևակերպել և ապա գործի անցնել։

7.

Անկախ դրանից՝ հակառակ Հայկոոպի բազմաթիվ նախազգուշացումներին ու շրջաբերականներին, կոոպերատիվների սկզբնական ցանցի առանձին միավորներ շարունակում են ցրել իրենց սուղ միջոցները նորանոր բաժանմունքների ու ձեռնարկների մեջ, չբծրագրված կերպով լայնացնելով իրենց գործունեության շրջանը, մինչդեռ՝ ընդհակառակը—շատ քիչ կոոպերատիվներ ճիշտ քաղաքականություն տանելով կարողացել են սեղմելիրենց ցանցը, հրաժարվելով մասնավորապես սպառկոոպերացիայի վոչ ձեռնտու արտադրական և արդյունաբերական ձեռնարկներից։

8.

Կոոպերատիվ ցանցի վերը նկարագրած դրությունը այլև նրա մեջ տեղի ունեցող խմորումները Հայկոոպի Կազմ-Բաժնին և տեղերի ակտիվ աշխատողներին առաջադրում են ցանցի—նորմալիզացիայի խնդիրը և հրամայականորեն պահանջում են նրա լուծումը՝ կոոպերացիայի հետագա շինարարության խորացման, առողջացման ու կայունացման մտքով։ Կազմակերպչական առաջիկա աշխատանքներն այնպես պիտի տանել, վոր մեր շինարարության բովանդակությունն ու ձևերը կրեն վոչ թե տարերային աշխատանքների բնույթ, այլ կրեն պլանաչափ, վերից մինչև ներքև և ներքևից մինչև վերև խիստ ծրագրված ու գիտակցված հասարակական տնտեսական շինարարության բնույթ՝ հիմված մասսաների ակտիվ ինքնագործունեության վրա։

9.

Ի՞նչ պիտի հասկանալ ցանցի նորմալիզացիա ասելով։ Այս նշանակում է—կոոպերատիվ շինարարության կազմակերպչական աշխատանքները իրականորեն հարմարեցնել Հ. Խ. Ս. Հ.-ի զանազան շրջանների տնտեսական, կազմակերպչական, կուլտուրական ու կենցաղային պայմաններին՝ նպատակ ունենալով կոոպերատիվ շինարարության տարերային ծավալմանը վճռականորեն վերջ տալ մի շարք վերակազմումների ու կազմակերպչական աշխատանքների միջոցով։ Ինքնին հասկանալի է, վոր այդ աշխատանքները խստորեն ղեկավարվելու են կենտրոնից։

1003
743/8

10.

Ցանցի նորմալիզացիայի աշխատանքների մանրամասնություններին անցնելով՝ հենց այժմ պիտի վորոշել այդ աշխատանքների բովանդակությունը։

ա) գոյություն ունեցող բազմախնամ ներսում առանձին բաժանմունքների անջատման ու անկախ կոոպերատիվների կազմակերպման խնդիրը Հայկոոպի Կազմհրահանգչական բաժնին առաջադրում են լուրջ ուսումնասիրության միջոցով պարզել այդ անջատման կազմակերպչական ու տնտեսական նպատակահարմարությունը և միայն վերջին դեպքում տանել համապատասխան վերակազմության ու կազմակերպչական աշխատանք, ըստ՝ վորում ուսումնասիրության հետևանքով յերևան բերված հիվանդոտ կոոպերատիվների կամ բաժանմունքների լուծարքի առաջ Հայկոոպի Կազմհրահանգչական Բաժինը չպիտի կանգ առնի,

բ) միաժամանակ գոյություն ունեցող «վայրենի» կոոպերատիվների գոյությունը համարելով հասարակական տե-

սակեաից անհանդուրժելի և ի նկատի առնելով, որ այդ կոոպերատիվներից շատերը ղեկավարում են կոոպերատիվ շուկան, հաճախ վարկաբեկում են կոոպերացիայի գաղափարը, թյուրիմացության մեջ են գցում ֆին-հարկային մարմիններին, ոգտվելով կոոպերացիային տրված արտոնություններից և, վերջապես, ծածկվելով կոոպերատիվ անվամբ՝ հաճախ պետական ու հասարակական կազմակերպություններից վարկեր են ստանում—Հայկոոպի Կազմ-Բաժինը ծրագրային աշխատանք պիտի հանարի նրանց լուրջ ուսումնասիրություն, որի հետևանքով այդ «վայրենի» կոոպերատիվները, որինական ձևակերպում պիտի ստանան կամ լուծարքի յենթարկվեն որենքով նախատեսված հիմունքներով։

11.

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, որ վերոհիշյալ բոլոր աշխատանքները Հայկոոպի Կազմակերպչական Բաժինը տանելու յե կոոպերատիվ ցանցի ակտիվ ուժերի մասնակցությամբ և հասարակական շահագրգռված մարմինների անհրաժեշտ աջակցությամբ։ Միաժամանակ պետք է այդ աշխատանքների ընթացքին տեղյակ պահել կոոպերացված մասսաները, վերջինների ընդհանուր ժողովներում հաճախակի անցկացնելով զեկուցումներ։

12.

Ընդգծելով կոոպերատիվ աշխատանքների բովանդակության գլխավոր մոմենտները և տեղերի ակտիվ մասնակցության անհրաժշտությունը, Հայկոոպի Կազմակերպչական Բաժինը և տեղերի կոոպերատիվ աշխատողները այժմից իսկ պիտի կոոպերատիվ շինարարության ընթացիկ աշխատանքների մեջ դնեն վորոշ սկզբունքներ, վորոնք նախորոշում են Հ. Ս. Ս. Հ. սպառկոոպերացիայի կոոպերատիվ ցանցի վերջնական կայունացման ու կազմակերպչական ձևավորումների ուղիները։

13.

Կոոպերատիվ քաղաքականության նպատակահարմար կիրառումը պահանջում է ամրացնել միախանութ ու ներքին տիպի բազմախանութ ընկերությունները, միաժամանակ ուղղելով կազմակերպչական գործունեությունը՝ վորոշ շրջանակների մեջ կայունացնելու համար այսորվա շրջանային տիպի բազմախանութները։ Սակայն կարևոր է առանձին-առանձին գնահատական տալ այդ յերեք տիպի սպառողական ընկերություններին և վորոշել այն բոլոր նախապայմանները, վորոնք անհրաժեշտ են նրանց նորմալ զարգացման համար։

14.

Առողջ միախանութն անվիճելիորեն այն նպատակահարմար կազմակերպչական ձևը պիտի համարվի, վորն առանձին գյուղերի ինքնագործունեության ու տնտեսական շինարարության կենտրոնում մեծ դեր ունի կատարելու։

Պարզ է, որ տեղական տնտեսական-կենցաղային միջավայրը վորոշ չափով պայմանավորում է պահանջների այն շարքը, որ նման միախանութներին պիտի առաջադրվի առանց վորևե զիջողության։ Միախանութի կազմակերպման համար անհրաժեշտ է.

ա) որ տվյալ բնակատեղիի ազգաբնակությունը ընդունակ լինի տնտեսա-հասարակական ինքնագործունեության և լինի վորոշ չափով ինքնապարփակ,

բ) որ կոոպերատիվին առնվազն անդամագրված լինեն 100 հոգի,

գ) վոր կանոնադրության վորոշված փայավճարների առնվազն 75 տոկոսը գանձված լինի,

դ) վոր կոոպերացիայի աշխատանքները տանելու համար տեղում գոյություն ունենան՝ թե ակտիվ խմբակ և թե ղեկավարներ,

յե) վոր կոոպերատիվը ունենա ապրանքա-փողային շրջանառության հեռանկարներ՝ հիմնված ազգաբնակության գնորդական ունակության վրա։

15.

Ներքին տիպի բազմախանութները—գավառակային կամ այլ տնտեսական կենտրոններում և քաղաքներում—գյուղական միախանութին համարժեք կազմակերպություններ պիտի համարվեն։

Ինքնին հասկանալի յե, վոր ներքին տիպի բազմախանութների զարգացման գրավականն և լինելու կոոպերացված մասսաների ակտիվացումը և ինքնագործունեության լայն հնարավորությունները՝ հիմնված պլանաչափ կուլտուրական աշխատանքների վրա։ Այս կարգի կոոպերատիվները ամենից շատ հարմարություն ունեն իրենց անդամների մեջ ամրացնելու նոր կենցաղի սովորությունները՝ աստիճանաբար ու պլանաչափ զարգացնելով թե սպառողական մթերքներով առևտուր անելը և թե գարկ տալով ժողովրդական աննդամատակարարման գործին։

16.

Յեթե ներքին տիպի բազմախանութների կազմակերպումն ու զարգացումը միախանութ կոոպերատիվի որգանական տնտեսական զարգացման հետևանքն է—մի բնակավայրում կենտրոնացած ազգաբնակության կարիքների բավարարման համար—ապա շրջանային կոոպերատիվների կազմակերպումը ավելի դժվար աշխատանք է պահանջում և ավելի մեծ զգուշություն։

Կոոպերատիվը կարող է շրջանային ծավալով յուր ազդեցությունը տարածել հետևյալ անհրաժեշտ պայմաններով.

ա) յեթե ավյալ կոոպերատիվը ֆինանսապես և կազմակերպչորեն կայունացած է,

բ) յեթե կոոպերատիվի կենտրոնը և նրա շրջանը տնտեսապես ամուր կապեր ունեն և գործնական հարմարություններ,

գ) յեթե շրջանի կոոպերացված մասսաները միահամուռ կերպով պահանջում են շրջանային կոոպերատիվին բաժանմունք դառնալ,

դ) յեթե կոոպերատիվի հաշվեկշիռը լուծարքունակ է և փայավճարները լավ են գանձվում,

յե) յեթե կոոպերատիվը հնարավորություն ունի յուր բաժանմունքների համար առանձացնել վորոշ ապրանքային ու դրամական ֆոնդեր՝ առանց կենտրոնի ընթացիկ գործարքներին վնասելու, և

զ) յեթե նոր բաժանմունքներ բանալու աշխատանքը տարվում է վորոշ հետևողականությամբ և լուրջ տնտեսական ուսումնասիրությունից հետո։

17.

Կոոպերացիայի սկզբնական՝ ցանցի աշխատող ակտիվ գործիչները այլև կոոպերացիայի զարգացմամբ շահագրգռված բոլոր հիմնարկներն ու առանձին անհատները պիտի չմոռանան հետևյալ հիմնական սկզբունքները, վորոնք թելադրում են մեր կոոպերատիվ շինարարության գործնական շահերից։

ա) Մեր տնտեսական շինարարությունը թեակոխել է մի այնպիսի շրջան, երբ առանձին-առանձին, չծրագրված կամ ընդհանուր ծրագիրներից չբղխող երևույթները՝ մասնավորապես կոոպերացիայի բնագավառում, անթույլատրելի են,

բ) մեր սպառկոոպերատիվ ցանցի շինարարությունը գնալու է առաջիկայում խիստ ծրագրված ուղիներով և կենտրոնի խիստ ղեկավարությամբ,

գ) այդ պլանաչափությունը և կենտրոնից ղեկավարելը նպատակ ունեն առաջիկա հաշվական տարում և հետագայում կայունացնել ու վերջնական ձևավորում տալ մեր սպառկոոպերատիվ ցանցին։

դ) բոլոր դեպքերում մեզ առաջին հերթին պիտի հետաքրքրեն ոչ միայն քանակական նվաճումները, այլ ավելի շատ և առաջին հերթին որակական նվաճումները։

18.

Նորմալիզացիայի աշխատանքների հերթական ու հաստատված լինելը պիտի գիտակցեն մեր հասարակակցությունի բոլոր մարմինները՝ մամուլը, Կուսակցական կազմակերպությունները, վարչական, արհեստակցական և այլ հասարակական մարմինների միասնական ճակատ պիտի ստեղծեն սպառողական կոոպերատիվ ցանցի նորմալ զարգացման համար՝ հիշելով այս մասին 14-րդ Կուսակցական կոնֆերանցիայի որոշումները՝ գրանից բղխող բոլոր յեզրակացություններով։

19.

Ներկա թեղխների վոդով, այլև տեղերում կատարված տնտեսական լուրջ ուսումնասիրությունների հետևանքով՝ Հայկոոպի Կազմակերպչական Բաժինը նպատակ պիտի դնի պատրաստելու սպառկոոպերատիվ նորմալ ցանցի քարտեզը։

ԶՔԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1.

Զքավոր գյուղացիության ճնշող մեծամասնությունը դեռ չի կոոպերացված և այդ կոոպերացման գործը մի շարք խոչընդոտների յե հանդիպել։ Թեև սպառողական կոոպերացիայում պարտադիր փայավճարը 5 ռուբլի յե (միայն տեղ-տեղ այն հասնում է 7-10 ռ.) սակայն՝ չքավորության ուժերից վեր է նույնիսկ այդ գումարի մուծումը։

Ըստ պետական ղեկրետի՝ չքավորությանը պիտի տրվեին վորոշ արտոնություններ—չքավորը կարող է իր փայավճարը մացնել մաս-մաս, մուտքի վճարը մացնելով նա անհապաղ իրավազոր անդամության իրավունք է ստանում իբր կոոպերատիվի անդամ և այլն։

2.

Նույն տեսակ արտոնություններ չքավորների համար նախատեսում է նաև կոոպերատիվների կանոնադրությունը. այդպիսով կոոպերացված հասարակությունը իր կանոնադրությամբ իսկ հանձն է առնում աջակցել չքավորների կոոպերացման գործին։ Կոոպերացված բանվորագյուղացիական մասսաները գիտակցում են չքավորության կոոպերացիայի շարքերը մտնելու անհրաժշտությունը, շատ տեղերում Փոխոգնությունները իրենց հերթին խոշոր աջակցություն են ցույց տվել այդ գործին և չքավորների նորանոր խմբեր են անդամագրել կոոպերացիային։

Չքավորների կոոպերացումը նշանակում է միաժամանակ նրանց ազդեցության ուժեղացումը կոոպերացիայում և նրանց վարչական ու վերաստուգման մարմինների մեջ մասնակցելու հնարավորությունները՝ ընդդեմ գյուղի կուլակ և ունևոր տարրերի։

3.

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, որ չքավորներին կոոպերացմանը զուգահեռ աշխատանք պիտի կատարել նաև չքավորների և միջակ գյուղացիների կոոպերատիվ ակտիվությունը աշխուժացնելու ուղղությամբ։ Հայկոոպը այս մտեսական տարվա սկզբին հրահանգել եր իր սկզբնական ցանցին՝ չքավորների կոոպերացման համար զուտ ոգուտից հատկացումներ անել։ Տեղերի կոոպերատիվ աշխատավորները մեծ մասամբ գիտակցել են խնդրի կարևորությունը և կիրառել են վերոհիշյալ հրահանգը, սակայն յեղել են կոոպերատիվներ, որոնք ինչ-ինչ պատճառներով հրահանգը չեն իրականացրել և չըմբռնելով խնդրի քաղաքական նշանակությունը և չքավորների կոոպերացմանը զարկ չտալով՝ այդ կոոպերատիվները ստեղծել են գյուղական կուլակների համար շատ ձեռնտու պայմաններ։

Ճիշտ է՝ այդ քաղաքականությունը շատ անգամ քողարկվել է «խնայողության պատրվակով», սակայն պետք է խիստ պայքար մղել այդ «խնայողության դեմ» քանի որ փաստորեն կոոպերատիվների շրջանառության միջոցները չեն պակասում, յերբ փայադրամագլուխը պասսիվի մի հոդվածից (զուտ ոգուտից) փոխադրվում է մյուսին։

4.

Սակայն եվ ավելի անթույլատրելի մի քաղաքականություն է վարվում չքավորության դեմ մեր ցանցի մի շարք կոոպերատիվներում։ Ոգտվելով փայագանձման կոմպանիայի անունից՝ մի շարք կոոպերատոր ընկերներ սպառնալիքի միջոցով հայտարարում են, որ մինչև որ կոոպերատիվի անդամները չմուծեն յերեք կամ հինգ ռուբլի՝ նրանք զրկվում են կոոպերատիվի իրավազոր անդամի մի շարք արտոնություններից, զեղչից, ապրանքն առաջին հերթին ստանալուց և այլն։

Կարիք չկա բացատրելու, որ այդպիսի սպառնական «կամպանիան» առաջին հերթին հարվածում է չքավոր գյուղացիությանը։

5.

Այդպիսի բացասական և անթույլատրելի գործողությունները և յելույթները չեին կարող վրիպել Հայկոոպի Հրահանգչական ապպարատի դիտողություններից։ Քննությունները պարզել են, որ նման գործելակերպ ունեցել են քաղաքականապես անպատրաստ վարչությունները կամ առանձին կոոպերատոր անհատները։

Տեղերին պարզաբանված է, որ ոչ մի վարչություն իրավունք չունի փայատերերին զրկելու իրավունքներից ու արտոնություններից՝ փայավճարը չմուծելու պատճառով։ Այդ իրավունքը վերապահված է միմիայն կոոպերատիվի բարձրագույն որգանին—նրա ընդհանուր կամ լիազորական ժողովին։

6

Ընդգծելով չքավորների կոոպերացման անվիճելի անհրաժեշտությունը մի կողմից՝ շերտավորվող գյուղի տնտեսական կազմակերպությունները չքավորների և միջակների ձեռքում պահելու համար և մյուս կողմից՝ նպատակ դնելով խորացնել միջակների և չքավորների փոխադարձ ոգնության հիմունքները Հայկոոպի լիազորների համագումարը տեղի կոոպերատիվ աշխատողներին պիտի տա հետևյալ հրահանգները.

ա) առաջադրել բոլոր կոոպերատիվների վարչություններին, վոր չքավորների կոոպերացման գործը համարեն քաղաքական ու տնտեսական ընույթ ունեցող առաջնահերթ խնդիր,

բ) առաջիկայում ևս շարունակել տարեկան զուտ ոգուտների 10 տոկոսի չափով հատկացումներ տալը չքավորների կոոպերացման ֆոնդին,

գ) անհրաժեշտ համարել, վոր չքավորների կոոպերացումը հեշտացնելու համար կոոպերատիվների վարչությունները կիրառեն թե որենքով և թե կանոնադրությամբ նախատեսված բոլոր արտոնությունները՝ կանգ չառնելով մի շարք գործնական հեշտացումների առաջ (չքավորներին կոոպերատիվի այս կամ այն աշխատանքները տալով և նրանց աշխատավարձը փայադրամագլխի վերածելով, փայավճարը մաս-մաս ընդունելով, մուտքի վճարը ընդունելիս չքավորներին համարելով իրավազոր անդամ և այլն),

դ) գյուղական փոխոգկոմների միջոցով ընդգծել չքավորների կոոպերացման նպատակահարմարությունը ըստ վորում՝ թե կոոպերատիվի, թե փոխոգկոմի այս նպատակով ունեցած ֆոնդերը պիտի գործադրվեն գյուղխորհուրդների, ՓՈԿ-ի, սպառկոոպի և այլ շահագրգռված հասարակական կազմակերպությունների փոխադարձ համաձայնությամբ։

յե) ցանկալի համարել, վոր չքավորների կոոպերացման ֆոնդի գումարը վոչ միայն չքավորների նոր խմբերի անդամագրության հատկացվի, այլև արդեն անդամագրված չքավորների փայավճարների լրացման ձգտելով՝ հասցնել չքավորների փայավճարների միջինը մինչև 3 ր.—3 ր. 50 կ.

7.

Սպառկոոպերատիվ ցանցը յուր աշխատանքների տարեկան հաշվեկշռի մեջ հատուկ ուշք պիտի դարձնի չքավորների կոոպերացման խնդրին և ակտիվացող մասսաների ուշադրությանն ուքննությանը պետք է առաջադրի այս ասպարիզում կատարած աշխատանքները—թե անցյալում և թե առաջիկայում—ստանալով մասսաների ցուցումները և հրահանգները առաջիկայի աշխատանքների վերաբերմամբ։

Գրառեպվար № 402 բ. Տիրաժ. 750

Տպարան ՀԵՐՄԵՍ Հրատարակչ., Յերևան, Մարքսի փող. 29.

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԵԶԻՍՆԵՐԻ № 1

ՀԱՅԿՈՈՊԻ ԼԻԱԶՈՐԱԿԱՆ 3-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԹԻՎ

1. *ԿՈՈՊԵՐԱՑՎԱԾ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ*
2. *ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
3. *ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՅԱՆՑԻ ՎԱՏՆՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ

ՅԵՐԵՎԱՆ ——— 1926 Թ.

Գրառեպվար № 402 բ. Տիրաժ. 750

Տպարան ՀԵՐՄԵՍ Հրատարակչ., Յերևան, Մարքսի փող. 29.

I

ԿՈՈՊԵՐԱՑՎԱԾ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.

Վերջին տարիների մի շարք համագումարներում և խորհրդակցություններում կոոպերացիայի հետագա զարգացման ուղղումների հեռանկարները պայմանավորվում են կոոպերացված մասսաների գիտակից ինքնագործունեությամբ և ակտիվացումով։

2.

Կոոպերացված մասսաների վոչ ակտիվ լինելու մասնակի պատճառները պիտի համարել— ա. անտեսական գործունեության թուլությունը, այլև նյութական շահագրգռման անպատակահարմար կիրառումը, բ. կոոպերատիվի ընտրովի մարմինների հաշվետվության ու պատասխանատվության թուլությունը, գ. կոոպերատիվի միջոցների անանտես ծախսումը, վատնումները, չարաշահությունները և այլ զեղծումները, դ. վարչական որգանների միջամտությունը կոոպերացիայի ներքին գործերին, յե. «ապառիկ առևտրի» անվան տակ կոոպերատիվի միջոցներն անհաշիվ ցրելը, զ. գյուղացիութ ան «անհատական» սովորությունների հնուց ժառանգած մնացորդները և

Ե. կոոպերացիայի ղեկավար մարմինների կազմակերպչական ու կուլտ-կրթական աշխատանքների թուլությունն ու անպլանաչափ լինելը։

3.

Ակտիվացման առաջին ու անհրաժեշտ պայմանները պիտի համարել՝ ա. կոոպերատիվին գիտակցորեն անդամագրվելը, բ. մուտքի վճարի ու փայավճարի մուծումը՝ համաձայն կանոնադրության և ընդհանուր ժողովի վորոշումների, գ. կոոպերատիվների ընտրովի մարմինների հաշվետու զեկուցումներին գիտակից ու քննական վերաբերմունք ցույց տալը։

4.

Կոոպերացված մասսաների ակտիվացմանն անպայման նպաստում են հետևյալ գործնական տվյալներն՝ ա. յերբ կոոպերատիվի տնտեսական գործունեության շոշափելի արդյունքներն ակընհայտ են կոոպերացված մասսաների համար, բ. յերբ կոոպերատիվի վերադիր ծախսերի ստիճանական կրճատումով գների իջեցման համապատասխան քաղաքականություն և կիրառվում, գ. յերբ կոոպերացիայի անդամների թիվն աճում և ու փայավճարների դանձման իրական տվյալները պարբերաբար հրատարակվում են ի գիտություն կոոպերատիվի անդամների։

5.

Կոոպերացված մասսաների ակտիվացման հետագա զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել հետևյալ միջոցները՝ ա. կոոպերատիվի անդամներին տեղյակ դարձնել կոոպերատիվի կանոնադրության բոլոր կետերին և հատկապես «իրավունքների ու պարտականությունների» հոդվածներին, բ. խստորեն կիրառել այդ կանոնադրությունը, գ. կոոպերատիվի ընտրական ուգանների ընտրության, հաշվետվության ու պատասխանատվության բոլոր որինական պահանջներն իրականացնել մասսաների գիտակից ու գործոն մասնակցությամբ, դ. անցնել ծրագրային աշխատանքի և կոոպերատիվի ընդհանուր (կամ լիազորական) ժողովներում քննության դնել թե այդ ծրագիրը և թե կոոպերատիվի յեկամուտների ծախսերի նախահաշիվները, յե. կոոպերացված մասսաներին մասնակից դարձնել թե վճարելիք ապրանքների տեսակների մշակման գործին և թե ընդհանուր կոոպերատիվ կամպանիաներին ու այլ հասարակական յելույթներին (զանազան տոնակատարություններ, կանանց միջազգային որ և և այլն), զ. վճռականորեն վերջ տալ կոոպերատիվի ներքին գործերին վարչական կարգով միջամտելուն՝ հատկապես կոոպերատիվ ցանցի լայնացման ու կոոպերատիվ առևտրի ու գների քաղաքականության խնդիրներում և ե. աշխուժացնել կոոպերատիվին կից վերաստուգիչ հանձնաժողովների խանութային, կուլտ-կրթական և այլ հանձնաժողովների գործունեությունը։

6.

Հայկոոպի Կազկոոպրահանդեսական Բաժինը և տեղերի ակտիվ կոոպերատորները կոոպերացված մասսաների ակտիվացումը խորացնելու համար կոոպերատիվ առորյա աշխատանքների մեջ պիտի մտցնեն հետևյալ գործելակերպը՝ ա. հոգ տանել և բավարարել արաջին հերթին կոոպերացիայի անդամների կարիքները, բ. գնումների ժամանակ կիրառվող գեղջերից ստիհանարար անցնել ոգուտների բաշխման ու գնումների պարգևատրման ավելի կատարելագործված ձևերի, գ. այս նպատակով մշակել կոոպերատիվներում անդամների գնումները հաշվառնելու նպատակահարմար միջոցներ, դ. կոոպերատիվի անդամների վարկավորումը (յեթե այդպիսին կիրառվում է) դնել ավելի կանոնավոր հիմքերի վրա՝ մշակելով համապատասխան հաշվեառի ու պատասխանատվության նորմաներ, յե. կոոպերացիայի նոր բաժամունքներ բանալ, նոր ձեռնարկների հիմնել և այլ խոշոր նշանակություն ունեցող խնդիրներին մասնակից անել կոոպերացված լայն մասսաներին։

7

Այս բոլոր միջոցների իրականացումը պահանջում է կոոպերացիայի ընտրված որգաններին կից ստեղծել մի շարք ոժանդակ մարմիններ, որոնց աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը տանելու յեն վարչության անդամները։

Հատկապես մեծ դեր ունին կատարելու ակտիվացման ասպարեզում՝

ա. խանութային հանձնաժողովները—կոոպերատիվ առևտրի տեխնիկական ու վարձու ասպարատների առողջացման խնդրում, այլև ապրանքների տեսակների և գների քաղաքականության ասպարեզում։

բ կուլտ-կրթական հանձնաժողովները—կոոպերատիվ լուսավորության ասպարիզում.

գ. բաղմախանութների լիազորները այլ և խորհրդի անդամները (առանձին սեկցիաների միջոցով)—կոոպերատիվ շինարարության, փայտվճարային կամպանիաների ու կոոպերատիվ տոնակատարությունների կազմակերպման գործում այլև լայն մասսաների մեջ կոոպերացիայի գաղափարը տարածելու գործում։

8.

Կոոպերացված մասսաների ակտիվացումն իրականացվելու յե գյուղական ՓՊԿ-երի, կոմյերիտմիությունների, կանանց կազմ., պրոֆմիությունների և կոմբջիջների լիակատար աջակցությամբ և վերջիններիս հետ համաձայնացրված գործնական ծրագրերով՝ կենտրոնից թելադրվող քաղաքականության ու տեղական առանձնահատուկ պայմաններից բղխող գործելակերպով։ Անհրաժեշտ և շեշտել, որ այս աշխատանքների մեջ հատուկ ուշադրության արժանի յե կանանց ու երիտասարդության կոոպերացման խնդիրը։

II

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՁԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻՆ ԿՈՌՈՊԵՐԱՑՄԱՆ ՅԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՈՒ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1.

Դեռևս 1924—25 տնտեսական տարվա ընթացքում Խորհրդային Հայաստանում գոյություն ունեցին յերկու զինվորական կոոպերատիվներ։ Նրանցից մեկը՝ Կ. Կ. Ռազմիկի (Боец К. К. А.) բաժանմունքը, հոգում եր 3-րդ դիվիզիայի կարիքներն, իսկ մյուսը՝ Հայկական դիվիզիայի Զինկոոպը, հոգում եր հայկական մասերի կարիքները։

Յերբ Ս. Խ. Հ. Միության կենտրոնում յեկան այն համոզման, վոր զինվորական և համաքաղաքացիական կոոպերացիաների ձուլման հարցը հասունացել է, և յերբ այդ տեսակետը ՍԽՀՄ Ռազմհեղափոխական Խորհրդի հրամանով և Յենտրոսոյուզի վորոշմամբ որինականացրվեց՝ մեղանում ևս որակարգի հարց դարձավ նույն խնդիրը։

Չնայած նրան, վոր Անդր. Ս. Ֆ. Խ. Հ. մեջ այդ ձուլումը հետաձգվեց այն պատճառաբանությամբ, թե քաղաքացիական կոոպերացիան դեռ ևս այնքան չի ամրապնդվել, վոր կարողանա ընդգրկել ու բավարարել կոոպերացված կարմիր բանակային մասսաների բոլոր կարիքները, Հայաստանում այդ ձուլումը կատարվեց՝ վորովհետև այստեղ զինվորական և քաղաքացիական կոոպերացիայի աշխատողներն այդ հարցի վերաբերմամբ ունեցին հակառակ տեսակետ։

Զինկոոպը ձուլվեց Յերևանի բանկոոպի հետ՝ տալով նրանց իր ամբողջ պարտքն ու պահանջը՝ ինչպես և այն բոլոր պարտականությունները, վորոնցով պետք և հոգացվեին սպառող կարմիր բանակայինների կարիքները։

Ձուլումը կատարվեց պայմանագրի հիման վրա և ամբողջ մի տարվա աշխատանքը ցույց տվեց, վոր ձուլումը կատարվեց ճիշտ և ժամանակին և վոր քաղաքացիական կոոպերացիան ամբողջովին ի վիճակի յե ընդգրկելու զինվորական մասսաների շահերը. բայց միևնույն ժամանակ այդ միասյա փորձը ցույց տվեց, վոր քաղաքացիական կոոպերացիան այնքան ել ճկուն չեղավ, բանակայինների հանդեպ ունեցած իրպարտականությունները լրիվ կերպով կատարել չկարողացավ. չկարողացավ խորացնել կարմիր բանակային փայատերերի միջև տարվելիք կազմակերպչական ու կոոպերատիվ կրթական աշխատանքները. չհարմարվեց զինվորական կյանքի առանձնահատուկ պայմաններին զորաշարժին, ամառային լագերային կյանքին և այլն։

2.

Սակայն այդ հանգիմարությունը վոչ մի չափով չի կարելի ուղղել Յերևանի Բանկոոպի հասցեին, վորովհետև շուտափույթ ձուլման հետևանքով ամբողջ դիվիզիայի կարմիր բանակայինների հոգատարությունը իր ամբողջ ծանրությամբ

ընկած և յեղել միմիայն Բանկոոպի ուսերին և յերկրի ամբողջ սպառողական ցանցն՝ ի դիմաց իր վիճաբանների այդ կարևոր ակտի նկատմամբ չի ցույց տվել իր վերաբերմունքը Հայկոոպի կամ նրա Խորհրդի ժողովներում։

Մինչդեռ՝ պարզ է, որ Հանրապետության տերիտորիայի վրա գտնվող Հայկական հրաձիգ դիվիզիայի կոոպերացման հոգատարության գործը պետք է իր վրա վերցներ Հայաստանի Սպառողական կոոպերացիայի ամբողջ սիստեմը։

3.

Իբր հիմք ընդունելով այդ տեսակետը, ինչպես և Յենարոսայուզի տված բոլոր հրահանգները ու ՍԽՀՄ-ի Ռազմահեղափոխական Խորհրդի հրամանները՝ Հայկոոպի Լիազորների 3-րդ ժողովը հրահանգում է.

ա) Պարտադրել Հայաստանի ամբողջ սպառողական ցանցին, որ նա հոգա Հայկ. հրաձիգ դիվիզիայի կարմիր բանակայինների կարիքները։

ա) Ամեն մի կայազորում, որտեղ կա սպառողական ընկերություն, այդ վերջինը կայազորի բոլոր կարմիր բանակայիններին մեխանիկորեն մատչելի է և անմիջապես ձեռնարկում և նրանց սպառողական ու կուլտուրական կարիքները հոգալուն։ Սպառողական ընկերությունը բոլոր փայատերերին բավարարում է համահավասար կերպով. ցանկալի է, որ նկատի առնվի կարմիր բանակայինների համար կարևոր ապրանքների ասորտիմենտը։

1926 թ. ապրել 1-ին ամբողջ Կարմիր բանակային կազմը պետք է կոոպերացված լինի այն կոոպերատիվի կողմից, որի գործունեության շրջանում այժմ կան Հայկական հրաձիգ դիվիզիայի մասեր՝ անկախ նրանց չափից։ Կարմիր բանակայիններին տրվում են փայատիրական սովորական գրքույկներ. որոնց մեջ գրվում են մուտքի վճարի և փայերի չափը։

Շարքային կարմիր բանակայինը մտցնում է միմիայն մուտքի վճար, որից հետո համարվում է անդամ. նրանից ուրիշ ոչ մի վճար չի վերցվում։

Սպառողական ընկերությունը կարմիր բանակայինների վճարները չի մտցնում հիմնական դրամագլխի մեջ, այլ պահում է նրանց փայադրամագլխի մեջ (նրանց մասին ոչ ոքի տեղեկություն չի տրվում), որովհետև մասերի տեղափոխության դեպքում այդ միջոցները պետք է վերադարձվեն այն սպառողական ընկերությանը, որին ցույց կտա Հայկոոպը։

Յերբ հեռացող մասը փոխարինվում է ուրիշ ավելի փոքրաթիվ զորամասով, այդ դեպքում վերադարձվում է միմիայն վճարների տարբերությունը, իսկ յեթե նոր յեկած մասը թվով գերազանցում է հառացածին՝ լրացնում է կոոպերացման ֆոնդը։

Կարմիր բանակայինների կոոպերացման ֆոնդն այդպիսով անբաժանելի է ամբողջ կոոպերացիայի սիստեմից և յենթակա չէ վերադարձման։ Զորացրման և զորակոչի դեպքում նորակոչներն ոգտվում են նախորդների միջոցներով կազմված ֆոնդից։

Այդ կանոնը չի վերաբերվում դիվիզիայի հրամաքաղաքական և վարչատնտեսական կազմին, որոնք ընդհանրապես յենթարկվում են մեր ցանցում գոյություն ունեցող ընդհանուր կանոնադրության։ Նրանք մացնում են բոլոր քաղաքացիներին համահավասար մուտքի և փայի վճարներ ամեն մի ընկերության որոշած փայի չափով և ապագայում, տեղափոխության դեպքում առաջնորդվում են ամբողջ ցանցի համար ընդհանուր կանոններով։

5.

Սակայն, քիչ թե շատ խոշոր զինվորական միավորների ամեն մի առանձին տեղափոխության դեպքում, փայերի, կամ՝ ի հաշիվ փայերի շրջանառության մեջ գտնվող որոշ միջոցների վերադարձնելն այն կոոպերատիվին, որի ազդեցության շրջանն և մտել տվյալ զորամասը, կատարվում է Հայկոոպի Կազմ-Բաժինը ցույց տված ժամկետով Հայկոոպի Կազմ-Բաժնի հիշյալ միջոցները վերադարձնելիս պետք է ղեկավարվի ըստ անհրաժշտության և կարևորության, նույնպես և այս կամ այն կազմակերպության ֆինանսական դրությամբ։ Հայկոոպի Կազմ-Բաժնի որոշման հետ չհամաձայնելու դեպքում հարցը դրվում է Հայկոոպի վարչության պլենումին, որի որոշումը պարտադիր է յերկու կազմակերպությունների համար։ Ինքնին հասկանալի յե, որ տեղական (ոչ պակաս կես տարուց) բնույթ կրող տեղափոխությունների ժամանակ բոլոր փայերը և կարմիր բանակայինների ամբողջ ֆոնդը վերադարձվում են, իսկ մասերի լագերային հավաքույթների և

կարճատև (կես տարուց վոչ ավել) բացակայությունների դեպքում, յերբ փայատերերի կազմից այդ զորամասերը հանել միտք չունի՝ յերկու կամ մի քանի կոոպերատիվների միջև համաձայնություն ե կայացվում և այդ համաձայնությունը անմիջապես իր որինական ուժի մեջ ե մտնում՝ Հայկոոպի Կազմ-Բաժնի կողմից հաստատվելուց հետո։ Այդ համաձայնությունների մեջ նախատեսվում են, ֆինանսական ոժանդակություն այն կոոպերատիվին, որի շրջանն և գնում մասը, նույնպես և՝ ժամանակավոր խնամակալության հանձնված մասի հոգատարության ձևը ու չափը (ասենք՝ կրպակի, գնդային խանութի, շարժական խանութների կազմակերպումը և այլն)։

6.

Ակներև ե, որ վերոհիշյալ բոլոր միջոցները թեպետ բոլոր կարմիր բանակայինների համար, չեն հաստատում միասնական կոոպերատիվ գրքույկ, բայց և այնպես սկզբունքորեն հաստատում են Հայկ. հր. դիվիզիայի քիչ թե շատ կոմպակտ մասերի իրավունքը՝ Հայաստանի բոլոր սպառողական ընկերություններում փայատիրոջ բոլոր իրավունքներով ոգտվելու խնդրում։ Նվազագույն միավորը, որ Հայաստանի վորևե սպառողական ընկերության գրքույկով իրավունք ունի մեխանիքորեն մտնելու որ և ե կոոպերատիվ փայատերերի կազմի մեջ պետք ե համարել դասակը (взвод)։ Սպառողական ընկերությունը առանձին զորամասին անմիջապես ընդունում ե իր կազմի մեջ և այնուհետև միմիայն սկսվում ե նրա իրավական գրության ձևակերպումը՝ Հայկոոպի Կազմ-Բաժնի հետ։

7.

Քաղաքացիական կոոպերացիայի գործունեությունը գնդի հրամանատարության հետ համաձայնեցնելու և կարմիր բանակային մասերի կազմակերպչական գործունեությունը ճիշտ ղեկավարելու համար՝ Հայկոոպի Կազմ-Կոլեգիայի մեջ, որպես մշտական անդամ՝ վճռական ձայնով մտցվում է շտաբի և քաղաժնի ներկայացուցիչը— որպես ներկայացուցել կոոպերացված կարմիր բանակայինների —որոնք թեկնածուի վերաբերմամբ իրենց կարծիքն արտահայտում են դիվիզիոնական խորհրդակցություններում։ Իսկ յեթե որևե պատճառով այդ անհնարին է անել, այդ դեպքում թեկնածությունը առաջարկվում է կայազորի ամենամեծ զորամասի կողմից։

8.

Հայկոոպի Կազմ-Կոլեգիայի վրա պարտականություն է ընկնում՝ մշակել մանրամասն կանոններ դիվեզիայի մասերի հոգատարության կարգի մասին—նրա ներկա դիսլոկացիայի պայմաններում և մտցնել ուղղություններ զորաշարժերի և այլ փոփոխությունների դեպքում։ Կազմ-Կոլեգիան մշակում է նաև կարմիր բանակայինների տնտեսական բավարարման միջոցներ, ինչպիսին են՝ որինակ՝ նրանց վարկավորումը, գնդային և փոխադրվող խանութների կազմակերպումը, զորաշարժման ինչպես և զորահավաքման ու զորացրման ժամանակ կայարաններում կրպակներ հիմնելը։ Կոոպերատիվների ծառայություններից օգտվելու այս բոլոր ձևերը կարմիր բանակայինների համար պիտի գտնել ընդունելի և անհրաժեշտ, ուստի այդ հարցի վերաբերմամբ Կազմ-Բաժնի կողմից արվող բոլոր ցուցմունքները ցանցի համար պարտադիր են։

9.

Տեղերում կայազորի խոշոր զորամասերը սպառողական ընկ. վարչության մեջ մտցնում են իրենց ներկայացուցչին՝ վարչության մյուս անդամներին հավասար իրավունքով։ Նրանք կամ ընտրվում են ընդհանուր հիմունքներով կամ թե մտնում են վարչության մեջ՝ կոոպտացիոն կարգով։ Խոշոր կոոպերատիվներում, որտեղ կան կազմ բաժիններ և կուլտ-կոմիսյաներ՝ այդ բաժիններում ու կոմիսիաներում մտցվում են զինվորականների ներկայացուցիչները։

Յերևանի Բանկոոպի վարչության մեջ զինվորականների ներկայացուցիչներն աշխատում են վարչության գործող ապպարատում։

Վարչության կազմի մեջ կոոպտացիոն իրավունքով ներկայացուցիչ ունենալու սկզբունքը կիրառվում է նաև լագերական հավաքույթներում։

10.

Զինվորական մասերի կարիքները հոգացող բոլոր սպառողական ընկերությունները այդ մասերի մեջ պետք է տանեն կազմակերպչական և կուլտ-կրթական աշխատանքներ։ Այդ ուղղությամբ վոչինչ չի արված։ Մինչդեռ՝ վոչ մի դեպ-

քում չի կարելի ժխտել կարմիր բանակային մասերի կոոպերատիվ գիտակցության բարձրացման կարևորությունը և չի կարելի անտես անել փայատերերի այն մասը, որն իր կուլտուրական կարիքները հոգալու իրավունք ունի։ Կոոպերատիվ կրթական գործի ճիշտ կիրառումը կարմիր բանակի յերկրային մասերի և նախազինակոչների մեջ հատուկ կարևոր խնդիր պետք է համարվի նաև այն պատճառով, որ ի դիմաց կոոպերատիվորեն գրագետ կարմիր բանակայինի՝ քաղաքացիական կոոպերացիան գյուղի համար ձեռք է բերում կոոպերատիվ գաղափարների ապագա տարածողներ և կոոպերացիայի ակտիվ կառուցողներ։

Այդ պատճառով՝ սպառողական ընկերությունները կարմիր բանակի կոոպերատիվ կրթության գործի համար իրենց նախահաշվից պետք է հատկացումներ անեն։

Կարմիր բանակայիններին, յերկրային մասերի և նախազինակոչների կոոպերատիվ կրթական գործունեության ծրագիրը սպառողական ընկերությունները պետք է խիստ կերպով համաձայնեցնեն զորամասի հրամանատարության հետ։

Ընդհանուր ցուցմունքները և աշխատանքի ծրագիրը մշակվում են Հայկոոպի Կազմ-Բաժնի կողմից (իր զինվորական ներկայացուցչի միջոցով և գնդի քաղմասի հետ միասին)։ Կազմ-Կոլեգիան քննում և հաստատում է կոոպեր. կրթական աշխատանքի մասին դիվիզիայի քաղբաժնի կողմից առաջարկված ծրագիրները և նախահաշիվները։

11.

Աշխատանքների համաձայնեցման և գործի ընդհանրացման անհրաժեշտության դեպքում, և ընդհանրապես գործունեությանն ուղղություն տալու նպատակով՝ Կազմ-Կոլեգիան, դիվիզիայի հրամանատարի համաձայնությամբ, զինվորական ներկայացուցիչներին հրավիրում է տեղական վարչություններին կից հրավիրվող խորհրդակցության, իսկ յեթե անհրաժեշտ՝ կոոպերատիվների ղեկավարների հետ միասին գումարվող խորհրդակցություններին։

12.

Կարմիր բանակայինների կարիքների անդադար հոգացողությունը ապահովելու համար, Հայկոոպի Վարչությանը վերապահվում է լայն իրավունք, անելու կարգադրություններ այն բոլոր հարցերի վերաբերմամբ, որոնք կապված են այդ հոգացողության հետ։ Նրա որոշումները իրագործվում են անմիջապես՝ ամեն մի կարգադրություն ստացող սպառողական ընկերության կողմից։ Միմիայն ընդհանուր կարգով, առանց կարգադրության իրագործումը կասեցնելու, սպառողական ընկերությունը կարող է գանգատվել Խորհրդին կամ Հիազորների հերթական ժողովին, յեթե Հայկոոպի վարչության որոշմամբ նա անբավական է։ Յերբ Հայկոոպի որոշումներից այս կամ այն զինվորական մասերը անբավական են

կամ թե զինվորական ներկայացուցիչն ու Կազմ-Կոլեգիան համաձայնության չեն գալիս՝ հարցը քննվում է Հայկոոպի վարչության և զինվորական հրամանատարության ներկայացուցիչների պաբիտեսային հանձնաժողովում։

III

ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՑԱՆՑԻ ՎԱՏՆՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ԶԱՐԱՇԱՀՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Միջկոոպերատիվ Խորհրդի Նախագահության վորոշումը 1925 թ. սեպտեմբերի 13-ից)

1.

Վատնումներ հասկացողության տակ թագնվում են հետևյալ հիմնական հանցագործությունները՝ հանդեպ կոոպերատիվ տնտեսության ամբողջության՝

ա) գողություններ, բ) զեղծումներ և յուրացումներ, գ) առհաշիվ գումարների, ինչպես և պաշտոնատար անձանց տրամադրության տակ գտնված գումարների ի չարը գործադրելը, դ) ինքնագլուխ կերպով ապառիկ ապրանք բաց թողնելու միջոցով հասարակական գումարների ցրումը և յե) ծառայության դիրքը և պաշտոնը շահադիտական նպատակներով ոգտագործելը։

2.

Վատնումների պատճառները բղխում են իբ իսկ կոոպերացիայի կազմակերպչական թերություններից, և այնպիսի թերություններից, վոր կոոպերացիայից անկախ են։

3.

Կազմակերպչական այն թերություններից, որոնցից ծնունդ են առնում վատնումները, հետևյալն են՝

ա) Կոոպերացված մասսայի թույլ ակտիվությունը և ինքնագործունեությունը։

բ) Վերատուգիչ հանձնաժողովների թույլ աշխատանքը և նրա վորակի ցածր լինելը։

գ) խանութային հանձնաժողովների աշխատանքի համարյա լրիվ բացակայությունը,

դ) հաշվապահական գործի անբավարար վիճակը ցանցի խոշորագույն մասում։

յե) Պատասխանատու գործակատարների հետ կնքած կոոպերատիվ վարչությունների պայմանագրերի չգոյությունը, վորպիսի պայմանագրերով նախ վորոշում են առաջինների պատասխանատվությունը ստանձնած արժեքների համար և թե վոր ժամանակին և ինչ չափով են պատասխանելու նրանք։

զ) ապրանքամթերքի պահպանման և վաճառման ժամանակ առաջացող բնական պակասների ճշգրիտ չափերի բացակայությունը,

է) պահեստապետների և պատասխանատու գործակատարների մոտ գտնված ապրանքների հազվադեպ և խիստ անփույթ ստուգումները,

ը) կոոպերատիվ ցանցին հրահանգչական ոգնություն ցույց տալու թույլ հնարավորությունը,

թ) կոոպերատիվ վարչությունների քմահաճ, բայց յերբեմն հակառակ իրենց ցանկության և

դրսի հարկադրանքով ապառիկ ապրանքների բաց թողնումը և շատ հաճախ գործակատարների ինքնագլուխ ապառիկների բաց թողնումը,

ժ) վարչակազմերի հաճախակի փոփոխումը,

ժա) զգուշ վերաբերմունքի բացակայությունը ընտրությունների ժամանակ և պատասխանատու աշխատակիցներ վարձելիս, վորի հետևանքով վարկարեկվածները և դատապարտվածները նորից հնարավորություն են ունեցել գործի անցնել սպառկոոպերացիայում,

ժբ) աշխատավարձի ցածր չափը,

ժգ) թույլ կոոպերատիվ դաստիարակչական աշխատանքը։

4.

Կազմակերպչական թերություններից և կոոպերատիվ կազմակերպությունների ու նրանց կենտրոնի կամքից անկախ վատնումների պատճառները հետևյալն են՝

ա) դատական որգանների դանդաղկոտությունը, վոր մի շարք դեպքերում վատնումներ յերևան հանելու որից մինչ դատավճիռ կազմելը տևել է մեկ տարի և ավելի,

բ) դատավճիռների մեղմ բնույթը և ներման ուժեղ արամադրությունը դատավորների կողմից անգամ ազատ արձակումը,

գ) դատախազության և դատական որգանների կողմից վատնումների հարցը հատուկ ուշադրության չարժանացնելը—նկատի առնելով հարցի հասարակական նշանակություն ունենալու խիստ վարևորությունը,

դ) չարամիտ հանցավորներից գողացված կամ վատնած գումարները գանձելու համար նրանց կայքը և ինչքը կոնֆիսկացիայի յենթարկելու որենքի բացակայությունը, որը հնարավորություն կտա վոչ թե այնպես գանձել, որ նրա տնտեսությունը չքայքայվի սովորական որենքի համաձայն, այլ կոոպերատիվին հասցրած վնասը ծածկելու նպատակով բռնագանձման յենթարկվեր նրա վողջ ունեցվածքը։

5.

Զարաշահություններ կատարողներին կամ նպաստողներին պետք է դասել յերկու կարգի՝ չարամիտների, որոնք շահադիտական նպատակներով են կատարում վատնումները և նրանց գործակիցներին։ Յեղած թվական տեղեկությունները վկայում են, որ այդ վատնումները կատարվում են մեծ մասամբ ընտրական մարմինների և պատասխանատու գործակատարների կողմից։

6.

Կոոպերացիայում կատարվող բոլոր տեսակի վատնումների դեմ պայքարելու նպատակով, կարող են կիրառվել հետևյալ յերկու կարգի միջոցները՝ նախազգուշական նշանակություն ունեցող և պատժող։

7.

Նախազգուշական ընույթ կրող միջոցները

որպես կազմակերպչական պետք է համարել հետևյալը՝

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) կոոպերացված անդամների ինքնագործունեության իրականացումը կատարյալ չափով կառավարող որգանների իսկական ընտրողականությամբ, ըստ որում ընտրվողները կատարելապես հաշվետու յեն լինելու իրենց ընտրողների առաջ։ Դա հիմնական գործոններից մեկն է կոոպերացիայի զարգացումը դնելու իրոք առողջ և հաստատուն հիմքերի վրա։ Հատուկ ուշադրությամբ և կազմվելու դեկավար որգանները հասարակականորեն գործունյա և ազնիվ աշխատակիցներից,

բ) վերստուգիչ հանձնաժողովների գործունեության ուժեղացումը դոկումենտալ և հանկարծակի ստուգումները հաճախեցնելու գծով,

գ) Միության (Հայկոոպի) հրահանգչական աշխատանքի և քննությունների ուժեղացումը,

դ) խանութային և ստուգիչ հանձնաժողովների աշխատանքները կանոնավոր և պլանաչափ հիմքերի վրա դնելը։

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

յե) հաշվապահական գործի կանոնավորումը այնպես, որ մուծումները ժամանակին կատարվեն, որ առ որ։ Դրամական գործառնությունների հաշվառումը հաշվապահական պատշաճ ձևավորումներով դիմադիր (կոնտրոլորենտ) հաշիվների

հաճախակի վերաստուգումներով, ըստ վորում հաշվական պերսոնալը պատասխանատու յե լինելու մուծումների և փաստաթղթերի ճշտության համար,

գ) գործակատարների հետ և այլ աշխատակիցների, վորոնց ձեռքում դրամ և այլ արժեքներ են գտնվում, պայմանագիր կնքելու պարտադիր անհրաժեշտությունը, ըստ վորում նրանք նյութական պատասխանատվություն են կրելու։

ե) ապրանքների թափման, չորացման և բնական պակասների համար միակերպ նորմաների սահմանումը,

ը) ավելի հաճախ և մանրակրկիտ դարձնել գործակատարների և պահեստապետների մոտ գտնված դրամներ և այլ արժեքների ստուգումը տարեկան չորս անգամից վոչ սակավ,

թ) ապառիկ ապրանքների բաց թողումը կոոպերատիվ ցանցում կատարել միայն վարչության հատուկ վորոշմամբ և նրա կողմից մշակած կանոններով։ Գործակատարների կողմից ինքնագլուխ ապառիկների բաց թողումը համարել վատնում հասարակական գումարների,

ժ) հաստատուն կանոնների սահմանումը առ հաշիվ գումարների և կանխիկների համար ընդունելով այն միայն գործուղման և ոպերատիվ կարիքների համար, սահմանելով ճիշտ ժամանակամիջոց, վորի ընթացքում հաշվետուն ներկայացնելու յե ծախսի հաշիվը։

ժա) ռոճիկների հաշվին կանխույթներ բաց թողնելու արգելումը՝ բացառությամբ որենքով նախատեսված դեպքերից։

ժբ) կոոպերատիվներին պարտադրել ունենալու Հայկոոպի հետ ունեցած հաշիվների գրքույկ, վորը հնարավորություն կտա նրանց ճիշտը իմանալու իրենց մուրհակային և բաց հաշվային պարտքերի մասին, ապրանքների և հաշիվների ստանալու ու նոմենկլատուրայի մասին։

ժգ) խիստ զգուշ ընտրություն կատարելը աշխատակիցներ ընդունելիս, մանավանդ այնպիսիներին, վորոնց հանձնարարվելու յե դրամական և այլ արժեքների պահպանումը, ստուգման յենթարկելով նրանց ստաժը։ Կոոպերատիվ աշխատակիցների հասարակական վորակումը բարձրացնելու միջոցների ձեռք առնումը,

ժդ) կիրառել պարգևատրման սկզբունքը այն աշխատակիցների նկատմամբ, վորոնք կատարում են մաքսիմալ առևտրական շրջանառություն, ապրանքային նվազագույն պակասների և փչացումների դեպքում։ Բարձրացնել ռոճիկները այնտեղ, վորտեղ վատնումներ չեն կատարվել և վորտեղ տնտեսական վիճակը և աշխատանքի վորակը այդ թույլատրում է,

ժե) բոլոր վատնումների հաշվառման գործը պարտադիր դարձնել ցանցի համար, ցանցը պարտավոր է հաղորդելու Հայկոոպի վատնողների անուն ազգանունները, վորպեսզի վոչ ցանցը իրազեկ արվի այդպիսիների մասին,

ժզ) պրոֆմիութենական գծով մշակել պայքարի միջոցներ վատնողների դեմ։

8.

Վատնումների դեմ ձեռք առնելիք պատ-

ժողական միջոցները հետևյալն են՝

ա) վատման մեջ մեղադրվողների նկատմամբ բոլոր դեպքերում կիրառել պարտադիր պատասխանատվության յենթարկելը,

բ) դատական կատարողության արագացումը ըստ հրահանգի,

գ) մեղադրվողների գույքի և կայքի վրա նախնական արգելանք դնելու անհրաժշտությունը մինչ գործի դատական քննությունը, վորպեսզի հնարավոր լինի կոոպերատիվն վնասները ծածկել նրանց (մեղավորների) գույքի հաշվին։

դ) լայն կերպով կիրառել ցուցադրական դատավորությունը։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԵԶԻՍՆԵՐԻ № 2
ՀԱՅԿՈՈՊԻ ԼԻԱԶՈՐԱԿԱՆ 3-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅԿՈՈՊԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԲԱՂԱԲԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՊԻ

ՅԵՐԵՎԱՆ — 1926 Թ.

Գրաքննվար № 402 բ. Տիրաժ. 750
Տպարան ՀԵՐՄԵՍ Հրատարակչ., Յերևան, Մարքսի փող. 29.

ՀԱՅԿՈՈՊԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.

Հայաստանի սպառողական կոոպերացիայի հաշվետու շրջանը ընորոշվում է յերկրի ընդհանուր տնտեսական վերելքով և սպառողական մասսաների գնողական ունակության բարձրացմամբ, վորի հետևանքով առաջացել է ապրանքային յեռուն շրջանառություն։ Այդ տեսակետից մեր յերկրի ընդհանուր ապրանքային շրջանառության մեջ սպառկոոպերացիան գրավել է գերակշռող դեր՝ դառնալով մասնավորապես ընթացիկ տնտեսական տարվա սկզբից պետարդյունաբերության ապրանքները սպառողին հասցնող ամենահիմնական որգաններից մեկը։

2.

Սպառողական լայն մասսաների գնորդական ունակության բարձրացումը, Հայկոոպի և ամբողջ ցանցի առևտրական շրջանառության աճեցման հետագա ընթացքն ու հեռանկարները մի կողմից և մյուս կողմից մանավոր առևտրի ծավալման առաջն առնելու, շուկան—մանավորապես կոոպերատիվ առևտրից դուրս մնացած շրջանները՝ լայնորեն ընդգրկելու անհրաժեշտությունը հրամայական են դարձնում կոոպերատիվ առևտրական ցանցի հետագա ընդլայնման խնդիրը։ Այդ խնդրի դրական և նպատակահարմար լուծման համար՝ անհրաժեշտ է կատարել համապատասխան ուսումնասիրություններ։

3.

Հայկոոպի առևտրական քաղաքականությունն ընթացել է կոմխսիոն-միջնորդական գործարքների հիմնական գծով։ Դրանով մեզ հաջողվել է տնտեսապես շահագրգռել պերիֆերիան և ավելի սերտորեն կապել կենտրոնի հետ, միաժամանակ սիստեմատիկորեն տալով ցանցին հիմնական ապրանքներ անուշան վերապիրներով և փաստորեն հանդիսանալով ցանցի շահերի պաշտպանը պետարդյունաբերության հանդեպ։ Կոմխսիոն գործարքների ուղղությամբ անհրաժեշտ է նշել ընթացիկ տարում Հայկոոպի կատարած զգալի նվաճումները, այսպես՝ կոմխսիոն գործարքները կազմել և կազմելու յեն Հայկոոպի շրջանառության մեջ 28%։ Կոմխսիոն գործունեության արդեն հրապարակ բերած գրական կողմերը թե առևտրա-ֆինանսական և թե կոոպերատիվ սիստեմայի ամբողջականության ամրացման տեսակետից անհրաժեշտ են դարձնում հետագայում ավելի ևս ուժեղացնելու Հայկոոպի առևտրական գործունեությունը այդ ուղղությամբ։

4.

Կոմխսիոն միջնորդական գործունեության վորպես անմիջական հետևանք մեզ հաջողվել է Հայաստանի սպառկոոպերացման հրապարակ բերել վորպես ամբողջական սիստեմա։

Պետք է արձանագրել, վոր համեմատած նախորդ տարվա հետ ընթացիկ տնտեսական տարվա ընթացքում Հայկոոպի և ցանցի առևտրական և կազմակերպչական կապը ուժեղացնելու տեսակետից կատարվել է զգալի նվաճում. այդ քաղաքականության վորպես գործնական արտա-

հայտություն հանդիսանում է Թիֆլիզի մեր ներկայացուցչությունը, վորն ընդգրկել է իր մեջ ցանցի խոշորագույն կետերի ներկայացուցչությունը Թիֆլիզի շուկայում (ունենալով դրանց կողմից հատուկ լիազորագրեր)։ Այս ուղղությամբ պետք է ձգտենք ընդլայնելու մեր աշխատանքները ընդգրկելով այդ գործի մեջ նաև դեռ դուրս մնացած կոոպերատիվներին։

5.

Հայկոոպի առևտրական քաղաքականության հիմնական անելիքներից և նվաճումներից մեկն էլ կազմում է այն, վոր վերջինիս հաջողել է Ցենտրոսոյուզի և Զակոյուզի միջոցով կապել հիմնական պայմանագրեր պետարդյունաբերության հետ ամենահիմնական ապրանքների նկատմամբ։ Մինչև այժմ կնքված հիմնական պայմանագրերն ընդգրկում եր առաջինի կարգի անհրաժեշտության ապրանքներ՝ մանուֆակտուրա, շաքար, հացամթերքներ, լուցկի, նավթամթերքներ և այլն, վորոնք կազմում են մեր շրջանառության մեջ 65-70%։ Արձանագրելով խոշոր հաջողությունները պայմանագրային գործունեության ասպարեզում անհրաժեշտ է պահպանել յեղածները և տարածել այդ մեթոդները մնացած մի շարք հիմնական ապրանքների նկատմամբ, վորոնք, ի դեպս, պետք է ասել, շատ չնչին տոկոս են կազմում։

6.

Միության և ցանցի կապի ուժեղացման համար անհրաժեշտ պետք է համարել միասնական գնումները կատարելու գործնական մեթոդը և հիմնական սպառողական ապրանքների վերաբերյալ տիպական պայմանագրերի կընքումը, վորը հսկայական նշանակություն և գերակշռություն

ունի պետարդյունաբերության ապրանքները ձեռնտու կերպով սպառողին հասցնելու։ Միաժամանակ Հայկոոպը պետք է հատուկ ուշադրություն դարձնի կենտրոնացած միատեսակ պայմանագրերի պայմանների բազմակողմանի լավացման (ասսորտիմենտի, վարկավորման ժամկետների, վճարման պայմանների և այլն վերաբերմամբ) վրա, որպեսզի այդ պայմանագրերն ապահովվեն կոոպերատիվ առևտրի լիակատար հաջողությունները շուկայի մրցման մեջ։

7.

Ինչ վերաբերում է Հայաստանի ներսը գտնվող պետական առևտրական կազմակերպությունների և Հայկոոպի փոխհարաբերությունների խնդրին պետք է արձանագրել, որ մեզ դեռ չի հաջողել գտնել նորմալ փոխհարաբերության գիծ մեր և Հայառի, Հոկի և Հայգյուղկոոպի միջև, խորանք իրենց առևտրական քաղաքականությամբ ստեղծուր են անհարթ մթնոլորտ, առաջացնելով զուգահեռականություն առևտրի ասպարիզում։ Այս տեսակետից անհրաժեշտ է փոխադարձ համաձայնության ճանապարհով ստեղծել նորմալ փոխհարաբերություններ կոնկրետացնելով նրանց ֆունկցիաները, որոշելով վաճառքի օբյեկտները։ Անհրաժեշտ պետք է համարել այդ փոխհարաբերությունները լեվս ձևակերպել հիմնական պայմանագրերով։

8.

Հայկոոպի քաղաքականության կարևոր կողմերից մեկն էլ լեղել է իր աշխատանքները պլանային հիմունքներով տանելը։ Նա հնարավորություն է տվել համաձայնեցնելով առևտրական և ֆինանսական կարողությունները, հաշվառման յենթարկելու միության և ցանցի առևտրական պահանջները։ պլանային սկզբունքների կիրառումը մեծապես նպաստել են մեր հիմնական պահանջները։ Պլանային աշխատանքների լայնորեն կիրառելու տեսակետից թե միությանը և թե ցանցին դեռ ևս մեծ անելիքներ են մնում։ այդ նպատակով անհրաժեշտ է հրահանգչական և ուսումնասիրական ճանապարհով լրացնել գոյություն ունեցող բացերը։

9.

Հայկոոպի և պետարդյունաբերության միջև լեղած հիմնական պայմանագրերի գոյության որպես անմիջական հետևանք մեզ հաջողել է վերջնականապես առողջացնել ապրանքների տեսակավորումը այսպես։ մեր շրջանառության մեջ 85% կազմում են առաջին կարգի ապրանքներ։ Միաժամանակ Հայկոոպին հաջողել է ազատվելու ծանրաբեռ ապրանքներից և անշահավետ ձեռնարկներից (ծխախոտի գործարան, Սանահնի և Ղարաքիլիսայի բազաներ, Զարբախի անտառություն, հին խլամ) դնելով ազատված միջոցները շրջանառության մեջ։ Հետագայում այդ ուղղությամբ լեր սկսած աշխատանքները պետք է շարունակել թե կենտրոնում և թե ցանցում գոյություն ունեցող դեֆիցիտների ուսումնասիրության ճանապարհով՝ նրանց վերացնելու համար։

10.

Արձանագրելով պետական վարկավորման նոր կուրսի անխուսափելիությունն ու անհրաժշտությունը վարկերի ընդհանուր կրճատման ուղղությամբ՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր միջոցները այդ կրճատումը սպառկոոպերացիայի, մասնավորապես Հայաստանի

նկատմամբ նրանց կիրառումը տեղի ունենա անհիմնագրկին կերպով և նկատի առնվի այն հիմնական հանգամանքը, որ Հայաստանի սպառկոոպերացիան առանց այն էլ վարկավորման կողմից միշտ էլ թերավարկավորման պայմաններումն է գտնվել։ Միաժամանակ նկատի առնելով վարկավորման ստեղծած արդի ծանր պայմանները, անհրաժեշտ գտնել սպառկոոպի առևտրական գործունեության ընթացքում խստագույն կերպով հաշվի առնել իրենց ֆինանսական հընարավորությունները, մասնավորապես շրջանառության ծավալման անհրաժեշտության դեպքում։

11.

Սպառկոոպերացիան միացնելով սպառողներին, պետք է հոգ տանի ոչ միայն վերջիններին անհրաժեշտ ապրանքների շարունակական մատակարարման վրա, այլ պետք է նաև պարզ ապրանքների վորակը և իր միութենական կենտրոնի միջոցով պետարդյունաբերության առաջ հարց դնի նրանց լավացման և թերությունների արմատախիլ անելու մասին։ Ապրանքների վորակին հետևելու աշխատանքը հիմնական պետք է համարել ընթացիկ գործունեության մեջ։ Այդ խնդիրը պետք է լայն քննության և հատուկ ուշադրության առարկա դարձնել։ Հայկոոպին անհրաժեշտ է ամբողջ ցանցի մեջ նկատված բացերն այդ խնդրի առթիվ ամբողջացնել և կարգավորման յենթարկել։

12.

Սպառկոոպերացիայի գործունեության մեջ հաշվետու տարվա ընթացքում նկատվել է գյուղատնտեսական մթերքների վաճառանության գործի բացը։ Հայաստանի սպառկոոպերացիան իր միության ղեկավարության տակ ծրագրված կերպով պետք է ընձեռի այդ գործին և խորացնի, ծավալի աշխատանքներն այս ասպարիզում ոգտագործելով լիովին չափով այդ նպատակի համար բաց թողնվելիք վարկերը։ Մասնավորապես այն շրջաններում, ուր գյուղատնտեսական կոոպերացիան թույլ է, շուկան ամբողջությամբ ընդգրկելու հնարավորություն չունի, անհրաժեշտ է որ սպառկոոպերացիան զբաղվի գյուղատնտեսական մթերքների վաճառման գործով։ Դրա անհրաժշտությունը թելադրում է և այն հանգամանքը, որ սպառկոոպերացիայի անդամները հիշյալ շրջաններում շուկայի զրամի շրջանառության բացակայության հետևանքով հարկադրված են իրենց արտադրանքը առաջարկել կոոպերատիվներին։

13.

Առևտրական գործունեության խորացման և բարձրացման տեսակետից անհրաժեշտ է դառնում առևտրական ասպարիզում գործող աշխատակիցների վերապատրաստության կարևորագույն խնդիրը։ Պետք է արձանագրել, որ այդ նպատակին հասնելու համար դեռ ևս քիչ աշխատանքներ են կատարված։

Անհրաժեշտ է թե կենտրոնում և թե շրջաններում կազմակերպել հաճախակի առևտրական խորհրդակցություններ. մասնագիտական գրականության և հատուկ հրահանգների ճանապարհով ուժեղացնել աշխատակիցների պատրաստությունը։ Անհրաժեշտ է կենտրոնին կից ունենալ տարեկան առնվազն յերեք առևտրական խորհրդակցություններ։

14.

Գների քաղաքականության մեջ միության հիմնական գիծը յեղել է. ապրանքային ճգնաժամի և շուկայի ժիտաժի ուժգին շրջանում պահել ապրանքների գները մինիմալ—

անհրաժեշտ վերադիրների շրջանում. մատակարարել նպաստավոր գներով ապրանքներ ամբողջ ցանցին, վորով և ազդել և շուկայում հրապարակ յեկած գների բարձրացման տենդենցներին։ Այդ հանգամանքը յերևացել է մանավանդ հիմնական ապրանքների՝ մանուֆակտուրայի, հացամթերքների, շաքարի և այլն վերաբերմամբ։

15.

Վերադիրների և ծախսերի քաղաքականությունը չի անցել Խորհրդային Միության սահմաններում գոյություն ունեցող տոկոսների սահմաններից։ Նախկին տարվա հետ համեմատելով՝ ծախքերն ու վերադիրներն զգալի չափով իջել են։ Այդ ուղղությամբ հետագայում ևս պետք է ձգտել իջեցնել վերադիրներն ու ծախսերը, չոչնչելով նրանց մինիմումի։

16.

Հայկոոպի բազաները հանդիսանում են իրրև իրենց շրջանի կոոպերատիվների ապրանքային մատակարարման կետեր։ Նրանց առևտրական, ֆինանսական քաղաքականությունը պետք է ընթանա կենտրոնի խիստ ղեկավարության տակ. վերջինիս կողմից նախապես հաստատված պլանների և նախահաշիվների սահմաններում։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հայկոոպի Լիազորների III-րդ Համագումարը հաստատեց յեվ ընդունեց սույն ժողովածույում գետեղված թեզիսները հետեվյալ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐՈՎ

ՍՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԹԵԶԻՍՆԵՐՈՒՄ

Պետք է ավելացնել

5-րդ գլխում.—Տարբեր կոոպերատիվների վարչություններն իրենց գործունեության մասին փոխադարձաբար զեկուցումներ են կարդալու կոոպերատիվների ընդհանուր ժողովներում։

11-րդ գլխում.— Սկզբունքորեն ընդունել, վոր կուլտ-կրթական ծախքերը պետք է մտցվեն կոոպերատիվների նախահաշիվներում։ Առաջարկել Հայկոոպի Կազմ-Բաժնին՝ վոր այդ մասին մշակված ծրագիր ներկայացնի Հայկոոպի Լիազորների Խորհրդին ի հաստատություն։

ԶՔԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԹԵԶԻՍՆԵՐՈՒՄ

Պետք է ավելացնել

6-րդ գլխի գ. կետում.—«Աշխատավարձը փայադրամագլխի վերածել» բառերից հետո՝ ավելացնել. «Փոխադարձ համաձայնությամբ»։

6-րդ գլխի գ. կետում.—Ցանկալի համարել 10% ֆոնդից այրիներին ու կարմիր բանակայիններին կանանց անդամագրելը։

6-րդ գլխում իբր զ. կետ.—Այն դեպքում, յերբ ոգուտի 10% հատկացումներով անդամագրած չքավոր գյուղացիները անդամ լինելուց հրաժարվում են՝ անդամավճարը չպետք է վերադարձնել, այլ նրա փոխարեն պետք է անդամագրել ուրիշին։ Իսկ 10% հատկացումներով անդամագրված չքավոր գյուղացիների այլ վայրը փոխադրվելու դեպքում՝ նրա փայավճարը պետք է փոխադրել նույն վայրի կոոպերատիվին ընդհանուր հիմունքներով։

ՍՈՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԱՏՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԵԶԻՍՆԵՐՈՒՄ

Պետք է ավելացնել

7-րդ գլխի ժդ կետում.—Մի կոոպերատիվի վոր և է կետում կատարված զեղծումը չի կարող պատճառ ծառայել, վորպեսզի կոոպերատիվի մյուս բաժանմունքներում ու կետերում ծառայող աշխատակիցները զրկվեն պարգևատրումից—յեթե, ի հարկե, կոոպերատիվն այդ անելու համար նյութական հնարավորություններ ունի։

ՀԱՅԿՈՈՊԻ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԹԵԶԻՍՆԵՐՈՒՄ

Պետք է ավելացնել

4-րդ գլխի վերջում.—Դուրս մնացած կոոպերատիվները պետք է ընդգրկել շահագրգռման և դյուրություններ տալու միջոցով։ Ցանկալի պետք է համարել, վոր ստորին կոոպերատիվ ցանցը իր Միության և մանավանդ Միության Թիֆլիսի ներկայաց. հետ առևտրական գործողություններ վարելիս՝ կիրառի թղթակցությունների միջոցով ապրանք պատվիրելու սկզբունքը։

7-րդ գլխի վերջում.—1) Այն շրջաններում, վորտեղ սպառկոոպերացիան հասունացել է և արդեն կարող է ընդգրկել շրջանի մանրավաճառքը, աննպատակահարմար համարել Հայաոի մանրաքանակ առևտուրը. առաջարկել Հայկոոպի Վարչությանը, վոր այս խնդիրն ուսումնասիրելով՝ համապատասխան որգաններում հարց հարուցի վերոհիշյալ շրջաններում Հայաոի մանրավաճառքը սպառկոոպերացիային հանձնելու մասին (Ստեփանավանում և այլն)։

2) Մեր ընդհանուր առևտրական քաղաքականության տեսակետից անհրաժեշտ համարել, վոր Հայաոը տեղերում իր պատրաստումները կատարի կոոպերացիայի միջոցով (և վոչ մասնավոր գործակալների, ինչպես այդ տեղի յե ունենում Մեղրիում և այլ տեղերում)։

3) Զակտեպեոն և Բոեց Կ. Կ-ն առևտուր պիտի կատարեն իրենց անմիջական ֆունկցիաների սահմաններում և այդ սահմաններից չպետք է յելնեն։

8-րդ գլխի վերջում.—Պլանային աշխատանքի սկզբունքն անհրաժեշտ է տարածել ցանցի բոլոր կոոպերատիվների վրա և հետագայում այնպես պետք է անել, վոր միության ծրագիրը բոլոր սկզբնական ցանցի իրական պահանջներից ու ծրագրից։

10-րդ գլխի վերջում.—Նկատի առնելով, վոր պերիֆերիան չի կարողանում լիովին

ոգտագործել իրեն հատկացված լիմիտը՝ հանդիպելով մի շարք դժվարությունների, միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ցանցն այդ վարկը ոգտագործի սոլո վեկսելներով։

12-րդ գլխում.—Հում նյութերի ու մթերքների պատրաստման խնդիրը ավելի նորմալ դարձնելու համար նպատակահարմար գտնել տեղերում Հայգյուղկոոպի հետ պայմանագրեր կնքելու սկզբունքը։

ԱՎԵԼԱՑՎԱԾ ՆՈՐ ԹԵԶԻՍՆԵՐ

1) Հանձնարարել Հայկոոպի ապագա վարչությանը, վոր Զանգեզուրում բաղա ունենալու խնդիրը մոտ ապագայում ուսումնասիրի և դնի խորհրդի առաջ։

2) Ապահովման (гарантный) մեկ տոկոս ֆոնդը, վոր կոոպերատիվները տալիս են միությանը՝ կրճատել մինչև կես տոկոս և թողնելով այդ գումարը Հայկոոպի տրամադրության տակ՝ Հայկոոպի Վարչությանն առաջարկել, վոր նա այդ տոկոսներից գոյացած գումարներն ոգտագործի նրանց նշանակության համաձայն։

3) Ապրանքների ասսորտիմենտի հարցում Հայկոոպի վարած քաղաքականությունը համարելով ճիշտ՝ առաջարկել Վարչությանը, վոր նա ուսումնասիրի գյուղի պահանջները և մատակարարի ամենաանհրաժեշտ ապրանքները։

4) Ունենալ յերկշաբթաթերթ, վորի ծախսը հոգալու և Հայկոոպը՝ կոոպերատիվների հետ միասին։ Առաջարկել խորհրդին՝ վոր վորոշի թե վոր կոոպերատիվը ինչ չափով պետք է մասնակցի այդ ծախքերին։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

«Ազգային գրադարան»
NL0197854

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ՆԿԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ